

Գիտության զարգացումը՝ առաջնահերթություն
Պետք է զարկ տալ ոլորտի բարեփոխումներին

Յուրաքանչյուր գիտնականին գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ են բարենպաստ աշխատանքային պայմաններ, գիտական գործուղումներ, գիտաժողովների մասնակցություն եւ համապատասխան աշխատավարձ, ինչպես նաեւ կոմունալ պայմանների ապահովում: Գիտության առջեւ ծառայած այս խնդիրների վերաբերյալ երեկ հայտնելով իր մտահոգությունը՝ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը նշեց, որ ոլորտը ուշադրության եւ բարեփոխումների կարիք ունի:

Նա հիշեցրեց, որ կոմիտեի ստեղծման ժամանակ գիտական հիմնարկների բյուջեից ստացված գումարների 87 տոկոսը ուղղվում էր աշխատավարձերի վճարմանը, եւ միան 17 տոկոսն էր կիրառվում ենթակառուցվածքների պահպանման եւ զարգացման նպատակով: Ինչպես տեղեկացրեց կոմիտեի նախագահը, կոմիտեին հաջողվել է այս տարվա բյուջեի 20 տոկոսի ավելացման պայմաններում աշխատավարձի ֆոնդի չափը հասցնել 75 տոկոսի՝ ապահովելով բազային աշխատավարձի 6 տոկոս աճ: Գումարի 25—30 տոկոսը ուղղվել է տնտեսական եւ այլ ծախսերի կատարմանը, որի միջոցով էլ հնարավորություն կստեղծվի վճարել կոմունալ ծախսերը, լրացնել նյութատեխնիկական բազան, կազմակերպել գիտական գործուղումներ եւ այլն:

Գիտության ոլորտում ձեռնարկված առաջին կարեւոր քայլը գիտության բարեփոխումների հայեցակարգն էր, որը կառավարության կողմից ընդունվել է 2007թ.: Հայեցակարգում նախանշված են այն բոլոր քայլերը, որոնք թույլ կտան այդ ոլորտը մոտեցնել միջազգային չափանիշներին: Հայեցակարգին պետք է հետեւի մի շարք փաստաթղթերի ընդունումը, որոնք ընթացքի մեջ են: Դրանցից առաջինը գիտական հիմնարկների օպտիմալացման խնդիրն է: Ի՞նչ է այն ենթադրում: Սամվել Հարությունյանը նկատում է, որ Հայաստանը մեծաքանակ գիտական հիմնարկներ ունի, որոնք իրենց գիտական խնդիրներով միմյանց կրկնում են, ուստի նպատակահարմար չէ նրանց բոլորի առկայությունը: Հաջորդ խնդիրը ֆինանսավորման մեխանիզմի հստակեցումն է: Ըստ բանախոսի, գիտության ֆինանսավորումը պետք է լինի ծրագրային, նպաստի գիտական արդյունքի առեւտրայնացմանը եւ ներառի գիտություն—արտադրություն կապը խթանող մեխանիզմներ: Գիտության ոլորտի բարենպաստ գործունեության համար նա կարեւորում է նաեւ միջազգային համագործակցությունը: Ուստի անհրաժեշտ է ապահովել գիտնականների մասնակցությունը գիտաժողովներին:

Որպես հիմնախնդիր նա դիտարկում է նաեւ բնագավառում գիտության երիտասարդացումը եւ համապատասխան ծրագրի մշակումը: Այսօր Հայաստանում գիտությունը բավական ծերացել է: Նրա խոսքերով՝ ԽՍՀՄ տարիների համեմատ մեր երկիրը կրիտիկական իրավիճակում է: Գիտության բնագավառում դոկտորների միջին տարիքը 63-ն է, իսկ գիտության թեկնածուները տարիքը անցնում է 57—ից: «Եթե գիտության երիտասարդացման խնդիրը մոտ ապագայում պետության կողմից լուրջ հոգաձության խնդիր չդառնա, ապա լուրջ կորուստներ կունենանք: Մենք սկզբունքային նշանակություն ենք տալիս այս հարցին եւ մեր ծրագրերում ամառային դպրոցների կազմակերպման համար բավական գումար նախատեսեցինք պետական

բյուջեով: Այս տարի արդեն 2 բավական խոշոր ամառային դպրոցների կազմակերպման ծրագիր է իրականացվել»:

Գիտության բնագավառում պետական քաղաքականության հիմնաքարերից մեկը նա համարում է հայագիտության ասպարեզում բարեփոխումների խնդիրը: Ըստ նրա, այն պետության համար խիստ ռազմավարական մոտեցում ունեցող ոլորտ է, որտեղ եւ լուրջ առաջընթաց է արձանագրվել: Այս տարի կոմիտեն կարողացել է հայագիտական սեմինարներ կազմակերպել: Ուսումնասիրվել են հայագիտության հարցերով զբաղվող մի շարք գիտական հիմնարկներ, որոնցից երկու կարեւորագույններին՝ Ցեղասպանության տուն—թանգարանին եւ Մատենադարանին, տրամադրվել են հավելյալ գումարներ՝ պայմանները բարելավելու եւ երիտասարդներին ներգրավելու համար: Հաստիքներ են տրամադրվել երիտասարդ կադրեր ընգրկելու համար:

Լուսինե ՆԱԶԱՐՅԱՆ

«ԱՌ-ԱՎՈՏ», 04.07.2009 թ.

«Թեկուզ ինձանից նեղանան»

Գիտության պետական կոմիտեի նախագահը բարձրաձայնում է, որ ԿԳ նախարարությունը գիտական խնդիրներով չի զբաղվում:

Որպեսզի մեր երկրում գիտությունը զարգանա՝ անհրաժեշտ է լուրջ պետական մոտեցում եւ ֆինանսավորում, ինչպես նաեւ մասնավոր՝ գործարար հատվածի շահագրգռում եւ ֆինանսավորում: Երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ նման կարծիք հայտնեց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Մամվել Հարությունյանը: Նրա ներկայացմամբ՝ շատ կարեւոր է, որ գործարարներն էլ սկսեն ինչ-որ բաներ պատվիրել տեղական գիտնականներին: Հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ վարչապետն էլ իր կողմից գործարարներին է կոչ անում նորագույն տեխնոլոգիաներ օգտագործել արտադրությունում, որպեսզի մրցունակ ապրանք արտադրեն, «Առավոտը» պարոն Հարությունյանից հետաքրքրվեց՝ մինչ օրս որեւէ գործարար դիմել է գիտնականների օգնությանը, կամ գիտնականներն իրենք ինչ-որ նորարարություն առաջարկել են գործարարներին, ինչին ի պատասխան՝ կոմիտեի նախագահն ասաց, որ չնայած մի քանի մանր-մունր համաձայնագրեր կամ պայմանագրեր եղել են բիզնեսմենների եւ գիտնականների միջեւ, սակայն մեծ հաշվով մեր բիզնեսմենները չեն վստահում հայաստանյան գիտնականներին. «Ամբողջ խնդիրն այն է, որ ոլորտը համակարգված չէ: Գիտական արդյունքների առևտրայնացումը մեզ մոտ համակարգված չէ: Պատճառն այն է, որ մեր բիզնեսմենները գիտությանն ուղղակի չեն վստահում՝ վատ մենեջմենտի պատճառով, այս ոլորտի մենեջմենտը կաղում է, եւ գիտական արդյունքները վստահելի չեն, քանի որ սարքավորումները, որով այսօր գիտական հիմնարկներում աշխատում են, շատ հին են, դրանք թարմացման կարիք ունեն: Պետք է միջոցներ գտնենք, որպեսզի ժամանակակից սարքավորումներ ձեռք բերվեն: Բայց ամենակարեւորը, կրկնում եմ՝ ճիշտ մենեջմենտն է, որպեսզի կարողանանք մեր արդյունաբերողին կամ ձեռներեցին

ցույց տալ եւ ապացուցել, որ մեր հայ գիտնականը կարող է շատ ավելի որակյալ եւ լավ արտադրանք տալ, քան դրսից ներկրվածն է»:

Պարոն Հարությունյանի վստահեցմամբ՝ այսօր ձեռներեցները հիմնականում դրսից են գնում սարքավորումները, ինչը շատ ավելի թանկ է, քան այն դեպքում, եթե Հայաստանում պատվիրեին:

Կոմիտեի նախագահի պատմելով՝ հայ գործարարները, եթե անգամ որոշում են տեղական գիտնականների մոտ իրենց անհրաժեշտ մի բան պատվիրել, հենց տեսնում են, թե գիտական ինստիտուտներում ինչ հնամաշ սարքավորումներով են աշխատում՝ մտափոխվում են: Պարոն Հարությունյանի խոսքերով՝ լավ կլինի մի ձեռք գտնել, որպեսզի ստեղծվի գիտության համար վենչուրային ֆոնդեր. «Դրանում ներգրավված պետք է լինի եւ պետությունը, եւ բիզնես-հատվածը, անհրաժեշտ է, որ պետությունը ռիսկային մասը իր վրա վերցնի, քանի որ ոչ մի բիզնեսմեն 100%-ով չի ուզում հովանավորել, ասում է՝ 80%-ը՝ ես տամ, 20%-ը՝ պետությունը»: Կոմիտեի նախագահի ներկայացմամբ՝ 1992 թվականից մինչեւ հիմա գիտության ոլորտում ոչ մի լուրջ բան չի արվել. իներցիայով են աշխատել: Ընդամենը 2007-ից հետո որոշակի բարեփոխումներ են կատարվել: Կոմիտեի ստեղծումը բազմաթիվ գիտնականներ դժկամությամբ ընդունեցին, մեր այն հարցին, թե այսօր է՞լ են շարունակվում այդ «հարձակումները», պարոն Հարությունյանն ասաց. «Վերաբերմունքն աստիճանաբար փոխվել է, արդեն հաշտվել ենք եւ հարաբերությունները նորմալացել են: Պարզապես մի բան չէին ըմբռնում, որ գիտության կազմակերպման խնդիր է եղել, գիտությամբ գրեթե չեն զբաղվել: Մի պարզ բան չեն հասկանում, որ տնտեսության ցանկացած ոլորտ պետք է վարչարարություն ունենա: Օրինակ, գյուղատնտեսությունը նախարարություն ունի, առողջապահությունը՝ նույնպես: Գիտությունն էլ տնտեսության ոլորտ է, ուրեմն պետք է ունենա գիտության նախարարություն կամ կոմիտե, եւ տարօրինակ բան չկա, որ ստեղծվել է մի կառույց, որը այդ խնդիրներով է զբաղվում»: Հարցին՝ ի՞նչ է, ԿԳ նախարարությունը չի՞ զբաղվում գիտության խնդիրներով, պարոն Հարությունյանն ասաց. «Չեմ վախենում ասել, թող ինձանից նույնիսկ նեղանան, կրթության եւ գիտության նախարարությունը հիմնականում զբաղվում է դպրոցական խնդիրներով: Եթե զբաղվել էլ են, ոչ այնպես, ինչպես իրականում անհրաժեշտ է»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

„АРКА”, 03.07.2009

ГОСКОМИТЕТ ПО НАУКЕ АРМЕНИИ ПРОВОДИТ СИСТЕМНЫЕ РЕФОРМЫ В НАУЧНОЙ СФЕРЕ

Государственный комитет по науке Министерства образования и науки Армении приступил к осуществлению системных реформ в научной сфере области науки, сказал на пресс-конференции в пятницу председатель комитета Самвел Арутюнян.

По его словам, важнейшими проблемами в области науки в Армении являются правильное распределение бюджетных средств и налаживание международных связей.

«В постсоветский период 80% бюджетных средств, выделенных на науку, направлялись на выплату зарплат научным сотрудникам. В этих условиях не оставалось средств для организации научных работ. Сейчас мы ведем работы по более эффективному распределению бюджета», - сказал Арутюнян.

Говоря о необходимости установления международных связей, глава Госкомиссии по науке отметил, что в изолированном состоянии развитие науки невозможно.

«Нужно расширять международное сотрудничество, выделять больше финансовых средств для зарубежных командировок армянских ученых, а также инициировать международные научные проекты по совместному финансированию», - добавил Арутюнян.

Еще одной важной задачей он назвал задачу «омолаживания» науки, отметив, что средний возраст докторов науки в Армении составляет 63 года, а кандидатов наук – 57 лет.

«Для решения этой задачи необходимо разработать молодежные программы, провести летние школы, семинары, конференции», - подчеркнул Арутюнян.

„Aysor.am”, 03.07.2009 р.

Գիտական պայմանագրեր՝ համաֆինանսավորման տարբերակով

«Գիտությունը բաց համակարգ է, և առանձին վերցրած՝ փոքր տարածքում ինքնամփոփ վիճակում, զարգացնել որևէ գիտություն հնարավոր չէ», - լրագրողներին ասաց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Ինչպես նշեց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահը, 2008 թվականից սկսած բյուջեով նախատեսվեցին բավականին լուրջ գումարներ գիտական գործուղումների համար:

«Այսօր արդեն վստահորեն կարող եմ ասել, որ բոլոր այն հայ գիտնականները, ովքեր արտերկրում ունեցել են բանավոր զեկուցումներ, ովքեր դիմել են պետական կոմիտե, նրանց բոլորի ճանապարհածախսերը մենք ի վիճակի ենք եղել վճարել», - նշեց Ս. Հարությունյանը և հավելեց, որ սա բերեց նրան, որ Հայաստանում էականորեն ավելացավ միջազգային գիտաժողովների քանակը:

Ըստ բանախոսի, ընդհանրապես փոքր բյուջե ունեցող երկրներում, որտեղ պետական միջոցները բավարար չեն գիտությունը լիարժեք ֆինանսավորելու համար, շատ հարմար ձև է բյուջեի մեծացման, այս կամ այն պետությունների հետ պայմանագրային հիմունքներով և համաֆինանսավորման տարբերակով գիտական ծրագրերի իրականացումը:

«Մենք արդեն իսկ ունենք լիարժեք պայմանագիր Ֆրանսիայի քաղաքացիական հետազոտությունների ֆոնդի հետ, և այս տարի արդեն մեկ մրցույթ հայտարարել ենք և հիմա արդյունքներն ենք ամփոփում», - նշեց Ս. Հարությունյանը և հավելեց, որ տեղի է ունենում հետևյալը. առաջարկվում են գիտական ծրագրեր, փորձաքննություն է անցնում ծրագիրը 2 երկրներում էլ և, եթե 2 կողմից լինում է դրական կարծիք ծրագրի վերաբերյալ, տեղի է ունենում ֆինանսավորում և ծրագիրը դառնում է ընդհանուր սեփականություն:

Ինչպես նշեց բանախոսը նմանատիպ պայմանագիր Հայաստանը ունի Ռուսաստանի հիմնարար հետազոտությունների հիմնադրամի, Բելառուսի գիտության պետական կոմիտեի հետ և սպասվում է պայմանագիր Գերմանիայի Կրթության և գիտության նախարարության հետ, ինչպես նաև՝ Բրազիլիայի հետ:

«Հայաստանը լիարժեք մասնակից է «Միջուկային հետազոտությունների միացյալ կենտրոնի» աշխատանքներին՝ վճարելով 85.000 դոլար տարեկան մոտ կես միլիոնի գիտական աշխատանքներ ենք իրականացնում, և մեր գիտնականներից 24 ընտանիք գործուղված են այնտեղ՝ լիարժեք կյանքով ապրում, աշխատում են և իրականացնում

են Հայաստանի համար կարևոր նշանակության գիտական ծրագրեր»,-ասաց Ս. Հարությունյանը:

Վերջում բանախոսը նշեց, որ ՀՀ-ի համար շատ կարևոր հանգամանք է հայագիտության ասպարեզում բարեփոխումների խնդիրը, ուստի, ուսումնասիրելով հայագիտության հարցերով զբաղվող մի շարք գիտական հիմնարկներ՝ Ցեղասպանության տուն-թանգարանին և Մատենադարանին տրամադրվել են հավելյալ գումարներ՝ պայմանները բարելավելու և երիտասարդներին ներգրավելու համար:

Գիտության զարգացման հեռանկարները

«Փոքր բյուջե ունեցող երկրներում, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունն է, մանավանդ ֆինանսական ճգնաժամի պայմաններում, գիտության ոլորտը, որը բավականին իներտ է իր բնույթով, և ցավոք սրտի, անցած տարիների ընթացքում առանձնապես լուրջ ուշադրության չի արժանացել, իրականացնել կտրուկ քայլեր և ստանալ շատ արագ արդյունքներ բավականին դժվար է»,- այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշեց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Սամվել Հարությունյանի կարծիքով, շարքային գիտնականին անհրաժեշտ է նորմալ աշխատանքային պայմաններ, գիտական գործուղումներ, գիտաժողովներին մասնակցելու հնարավորություն և աշխատավարձ, սակայն այս բոլոր հարցերը դժվար լուծելի են փոքր բյուջեի պայմաններում:

Ինչպես նշեց Ս. Հարությունյանը, հետխորհրդային շրջանում ՀՀ-ում գիտության բյուջեն ծախսվել է հիմնականում աշխատավարձերի վրա, և քանի որ պետական հիմնարկների գումարների 87 տոկոսը ծախսվում էր աշխատավարձերի վրա, ապա, ըստ բանախոսի, մնացած 13 տոկոսը ակնհայտորեն անբավարար էին լուրջ գիտական հետազոտություններ անելու, գիտական նյութեր և սարքավորումներ ձեռք բերելու, ինչպես նաև՝ կոմունալ այլ ծախսերի համար:

«Եվ հենց դա է պատճառը, որ գիտական հիմնարկների գերակշիռ մեծամասնությունը ձմեռվա ամիսներին, ուղղակի, չէին աշխատում»,- նշեց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը և հավելեց, որ անհնար է գիտական հետազոտական աշխատանքներով զբաղվել այն սենյակներում, որտեղ մինուս ջերմաստիճան է, մանավանդ, որ գիտական սարքավորումների մեծ մասը սենյակային ջերմաստիճանից ցածր ջերմաստիճանի դեպքում, ուղղակի, չեն աշխատում:

«ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԳԻՈ», 03.07.2009թ.

Առաջնային է մնում գիտության երիտասարդացման խնդիրը

Գիտության զարգացումն այսօր մեր երկրի կարևորագույն խնդիրներից է: Այս ոլորտում անելիքները շատ են դեռևս Խորհրդային Միության փլուզումից հետո: Գիտության ասպարեզում բացթողումները փորձում է լրացնել նաև ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտեն:

Կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի խոսքով՝ գիտության ասպարեզում միշտ էլ արվել են բարեփոխումների լուրջ փորձեր, բայց մինչև 2007 թվականը դրանք չեն ունեցել լուրջ արդյունքներ: ՀՀ առջև դրված մի շարք խնդիրներից Սամվել Հարությունյանն առանձնացնում է հետեւյալները. Հայաստանը դարձնել զարգացած

պետություն, ինտեգրվել միջազգային գիտակրթական հանրությանը եւ կատարել տնտեսության զարգացմանը նպաստող հետազոտություններ:

Թեեւ խնդիրները շատ են, բայց կա նաեւ որոշ առաջընթաց, նկատում է Սամվել Հարությունյանը:

«Այնհայտ է, որ փոքր բյուջեի պայմաններում շարքային գիտնականը աշխատավարձի էական բարձրացում չի նկատել: Իրոք՝ աշխատավարձը, որ միջինով նախկինում կազմում էր 52 հազար, այժմ մոտավորապես 56 հազար է, շարքային գիտնականի վրա առանձնապես չի երեսում, բայց այն քայլերը, որոնք արդեն արվեցին եւ բյուջեում ամրագրված են առանձին տողերով, միտված են, որ ապագայում համակարգն ավելի արդյունավետ աշխատի, գումարներն ավելի արդյունավետ բաշխվեն»:

Սամվել Հարությունյանը կարեւորում է նաեւ գիտության ասպարեզում երիտասարդացման խնդիրը, քանի որ գիտությունը, ըստ նրա, այսօր բավականին ծերացել է:

«Մեր գիտության դոկտորների միջին տարիքը 63 է, գիտության թեկնածուներինը՝ 57, եւ եթե երիտասարդացման խնդիրը մոտակա ժամանակներում պետության հոգածության խնդիր չդառնա, մենք լուրջ կորուստներ կունենանք»:

Լուրջ ուշադրություն է դարձվելու նաեւ հայագիտությանը, քանի որ այն երկրի ռազմավարական նշանակություն ունեցող կարեւորագույն ճյուղերից է:

Այսպիսով՝ ընդհանրացնելով ոլորտի խնդիրներն ու արված աշխատանքները, ի վերջո, Սամվել Հարությունյանը նշեց, որ Հայաստանն իրականում ունի գիտական լուրջ պոտենցյալ, պարզապես, դա պետք է ճիշտ օգտագործել եւ դրա համար ոչ միայն պետական, այլեւ մասնավոր ֆինանսավորում է հարկավոր:

Սոնա Հակոբյան
«Ռ-ադիոլուր»

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ», 03.07.2009 թ.

Հայկական պետությունը պետք է մեծ ուշադրություն դարձնի հայագիտության զարգացմանը. փորձագետ

Հայկական պետությունը պետք է մեծ ուշադրություն դարձնի հայագիտության՝ որպես ռազմավարության տեսանկյունից կարևոր գիտության զարգացմանը, ուրբաթ մամուլի ասուլիսի ժամանակ ասաց Հայաստանի գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

«Բարեփոխումները հայագիտության ոլորտում սկզբունքային նշանակություն ունեն մեր պետության համար», - ասաց Հարությունյանը՝ նշելով, որ խորհրդային իշխանության 70 տարվա ընթացքում այդ գիտությունը հետընթաց է ապրել:

Նա ընդգծեց, որ ներկայում որոշակի քայլեր են ձեռնարկվում հայագիտության զարգացման համար:

«Այս ոլորտով զբաղվող կարևորագույն ինստիտուտներին՝ Երևանում հայերի ցեղասպանության թանգարան-ինստիտուտին և «Մատենադարան» հինավուրց ձեռագրերի ինստիտուտին, լրացուցիչ ֆինանսական միջոցներ են տրամադրվել զարգացման և երիտասարդության ներգրավման համար», - ասաց հանձնաժողովի ղեկավարը:

Նրա խոսքերով, անհրաժեշտ է նաև ուսումնասիրել ոչ միայն Հայաստանի տարածքում գտնվող արժեքները, այլև այլ երկրների արխիվները, ինստիտուտներն ու թանգարանները հայագիտության զարգացման համար արժեք ունեցող աղբյուրների բացահայտման համար: -0-